ՀԱՄԱՑՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Ց. ՍԱՂԱԹԷԼԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

Այժմ այլ ևս կասկածանքի առարկայ չի կարող լինել, որ Հայաստանը աւելի հին ժամանակներում անհամեմատ աւելի շատ ազգաբնակութիւն ունէր, քան վերջին դարերում և այժմ մեր երկրի շատ մասերում գտնւում են ամայի և քար քարոտ տարածութիւններ, որոնց մէջ ճանապարհորդը զարմացմամբ պատահում է քաղաքների և գիւղերի աւերակների։ Առաջի անգամից նա չի կարողանում ըմբռնել, թէ ինչպէս մարդիկ բնակութիւն են հաստատած եղել այդ անապատներում և միջոց ունեցել հոյակապ շինութիւններ կանգնեցնել։ Նա տեսնում է հնձաններ և չի կարողանում հասկանալ, թէ արդեօք ինչպէս այդ տեղ այգիներ էին բուսնում։ Բայց նորա համար այդ դժւար խնդիրը բոլորովին պարզւում է, երբ նրան ցոյց են տալիս կամ նա ինքը կարողանում է տեսնել հազիւ նշմարելի հետքեր վաղուց աւերւած ջրանցքների, որոնք շատ անգամ սկսւում են հեռաւոր լեռներից։ Սուրմալու գաւառի համարեա կէս մասը, որ այժմ կատարեալ անապատ է, մի ժամանակ ծածկւած է եղել պտղաբեր այգիներով և արտերով։

Այդ գաւառում տարածւող Արարատեան լեռնաշղթայով անցնելիս են եղել ջրանցքներ, որոնք ոռոգել են ահագին տարածութիւն։ Այդպիսի ջրանցքների գոյութիւնը ապացուցանելով անկասկած մեծ

[1]) Տե՛ս «Մուրճ»-ի № 5.

տեխնիկական հասկացողութիւն դրանց ստեղծող ժողովրդի մէջ, ցոյց է տալիս միևնոյն ժամանակ, որ այդ ժողովուրդը սպառած լինելով բոլոր մշակութեան յարմար հողերը, իւր բազմամարդութեան պատճառով, ստիպւած է եղել մեծ հմտութիւն և աշխատանք գործ դնել ծառայեցնելու հողագործութեան այնպիսի տարածութիւններ, որոնք իրնէ անապատ են եղել և առանց աշխատութեան ոչ մի բերքի ընդունակ։ Այս երևոյթին կարելի է հանդիպել համարեա ամեն մի հայկական գաւառում։ Հայաստանի նախնի բազմամարդութիւնը ապացուցում է և ուրիշ կողմից։ Հողի նոյն կարօտութիւնը, որ ստիպել է ջրանցքներ և ամբարտակներ կառուցանել, հողագործութիւնը տարածել է մի ժամանակ մեր երկրում մինչև նրա կլիմայական սահմանի վերջին կէտը։ Նոյնանման աւերակներ ինչպէս վերև յիշւածները պատահում են այնպիսի բարձր լեռների վերայ, որտեղ բացի ալպեան բոյսերից հազիւ հազ բուսնում են ցորեն և գարի։ Մասիսի արևմտեան գժւարամատչելի կողքի վերայ, որ շատ հեռու մշտական ձիւնից, կանգնած է մի աւերակ մի քանի կոփածոյ քարերից շինւած եկեղեցիներով։ Այդտեղ այժմ ապրում են մի քանի տուն կիսավայրենի քրդեր իրանց խաշիններով։

Հայկական տարրի նւազիչ պայմանները միևնոյն ժամանակ կորստաբեր էին սեփականութեան զարգացման համար։ Այն թշնամին, որը մինչև անգամ պատերազմը վերջանալուց յետոյ, միայն իւր արիւնռշտութեան և վայրագութեան բաւարարութիւն տալու համար չէր խնայում տիրած երկրի բնակիչների կեանքը, մինչև անգամ շինութիւնները, հասկանալի է թէ ինչպէս կը վերաբերւեր այդ բնակիչների իրաւունքներին, մանաւորապէս սեփականութեան։ Վերջիններիս մասին նորա աչքում հարց անգամ չէր կարող գոյութիւն ունենալ։ Այն կեանքը, որը առաջ եկաւ Հայաստանում բարբարոսների արշաւանքներից յետոյ՝ իսկապէս կեանք չէր, այլ մի տեսակ օրհասական կռիւ էր, որից հրաշքով ազատւեց հայկական տարրը վերջնական կորստից։ Ցափշտակութիւնը, ամեն տեսակ իրաւունքի բռնաբարութիւնը և կոտորածը թրքո-թաթար ազգերի կեանքում նոյն չափ ազդեցիկ և գրաւիչ են եղել, որքան մարդկութիւնը դէպի յառաջադիմութիւն մղող ձգտումները հնդկա-եւրոպական ազգերի համար։ Այդ ցեղի հակակուլտուրական ինստինկտները չը թուլացան

ժամանակի ընթացքում, չը նայելով ոչ մի շփումի, չը նայելով որ նոքա բռնեցին այն երկիրները, որտեղ որդանն էր քաղաքակրթութեան։ Եւ այս տեսակ մի տարր չը բռնեց մեր երկրի մի որոշ մասը, ինչպէս Ռուսաստանում, այլ նա տարածուեց ամբողջ երկրի մէջ և այդ պատճառով նորա աւերիչ ազդեցութիւնից ազատ չը մնաց ոչ մի հայկական գաւառ։ Ինչ որ դարերի ընթացքում ստեղծել էր մեր ժողովուրդը, քանդուեց և նա դատապարտուեց ոչ թէ միայն կանգ առնելու զարգացման մի կէտի վերայ, այլ շատ բանում յետադիմելու։ Եթէ աւելի խորը տեսակէտից նայենք, ծանր վտանգը միայն մի ազգի չը հասաւ, միևնոյն ժամանակ և ամբողջ քաղաքակրթութեան։ Բայց այդ քննելը մեր նպատակից դուրս է։ Մենք պատմութեան դիմեցինք որոշ նպատակով։ Մեզ հարկաւոր էր որոշելու այն հետևանքը, որ ունեցան յայտնի պատմական անցքեր հողատիրութեան վերաբերմամբ։ Մեզ հարկաւոր էր պարզել համայնական հողատիրութեան երկայնակեցութեան պատճառները մեզանում, և պատմութիւնը բացատրում է մեզ այդ։

Բնակիչների նստելու պատճառով հողագործութեան համար պիտանի հողը մեզանում քանի գնում էր ընդարձակւում էր և իւրաքանչիւր յետագայ սերունդ աւելի շատ հողով կարող էր օգտուել քան թէ առաջ։ Իւրաքանչիւր հողագործ կարող էր մշակել այնքան հող, որքան ցանկանում էր և ընտրել այդ հողը այնտեղ, որտեղ ինքը կը կամենար։ Հողի առատութեանը չափ չը կար։ Հողը այսպիսի դէպքերում կարելի է համեմատել բնութեան միւս բարիքներին, որոնցից իւրաքանչիւրը կարող է օգտուել որքան կը կամենայ։ Բայց այդ ցանկութիւնը սահման ունի։ Աշխատանքի արդիւնաբերութիւնը շատացնելու համար, հարկաւոր է բանող ոյժ և հարկաւոր է, որ աւելացրած արդիւնքը մի որ և իցէ տնտեսական արժէք ունենայ։ Աւելորդ է ասել որ այնպիսի քաղաքական պայմանների մէջ, որոնցում գտնւում էր Հայաստանը, բերքերի արտահանութիւն չէր կարող լինել։ Չէր կարող լինել և ներքին պահանջ, որովհետև նոյն պատճառները արգելաւոր էին քաղաքների զարգացման և եղած քաղաքների բնակիչները նոյնպէս պարապւում էին հողագործութիւնով։ Մի քանի քաղաքներում մինչև այժմ էլ ժողովրդի մի մասը պարապւում է հողագործութիւնով, ինչպէս օրինակ Ալէքսանդրոպոլում, Նոր Բայազէդում, և

այլն։ Այսպէս ուրեմն արդիւնաբերողը, բացի իրանից, ուրիշ սպառող չունէր, ուստի և շահ չունէր արդիւնքները աւելացնելու նպատակով ընդարձակել իւր մշակութեան հողի տարածութիւնը։

Այսպիսի պայմաններում մասնաւոր սեփականութեան գաղափարը չէր կարող զարգանալ, չէր կարող զարգանալ ցանկութիւն գիւղացու մէջ բացառապէս և մշտապէս իրան յատկացնել այս կամ այն հողը, որովհետև նորա ընտրութեան համար խոչնդոտ չը կար՝ իւր կարիքների չափ նա կարող էր հող մշակել որտեղ և որքան կամենար։

Նոյն իսկ դաշտերի առատութիւնը հարկաւ պիտի թելադրէր շատ շուտ փոխելու վարելահողերի տեղերը, սպառուածից անցնելու աւելի պարարտին։

Միևնոյն ժամանակ անընդհատաբար գոյութիւն ունէր մի ուրիշ նշանաւոր խոչնդոտ մասնաւոր սեփականութեան զարգացմանն։ Դա բնակութեան անհաստատութիւնն էր և իրաւունքի անապահովութիւնը։ Ամեն մի համայնք դառը փորձերից լաւ գիտէր որ երկար չի տևելու նորա գոյութիւնը, որ մի օր կարող է հիմնայատակ լինել նորա բնակութեան գիւղը և որ նորա անդամները սրի ճարակ կը լինեն կամ կը գաղթեն։ Այսպիսի պայմաններում հասկանալի է, որ հողատիրութեան կազմակերպութիւնը չէր կարող առաջ ընթանալ, պիտի կանգ առնէր և մնար միևնոյն գրութեան մէջ, քանի շարունակում էին գոյութիւն ունենալ այդ պայմանները։ Եւ ահա ինչն էր պատճառը որ համայնական հողատիրութիւնը մեզանում երկար ժամանակ տևեց և հասաւ մինչև մեր օրերը, չնչին բացառութիւններով։

Բոլորովին այլ ուղղութիւն է ստանում հողատիրութիւնը, երբ պիտանի հողի տարածութիւնը մեծում է նոյնը, իսկ ազգաբնակութիւնը անընդհատ աւելանում։ Այդ դէպքում անկասկած կը գայ ժամանակ երբ բոլոր հողագործութեան համար պիտանի հողը կը սպառուի։ Բայց համայնքը անընդհատ աճում է, իսկ նորա աւելացած անդամների պահանջներին պէտք է բաւարարութիւն տալ։ Այդ ժամանակ դիմում են վերաբաժանման (передѣлы)։ Համայնքը ընդհատում է իւր լուռ համաձայնութիւնը, որով նա մինչև այժմ թոյլ էր տալիս իւր անդամներին ազատ օգտուելու իրանց բռնած հողերից և նորերին տիրելու, որովհետև նա այդ էլ չի կարող թոյլ

տալ առանց զոհելու իւր անդամների մի մասի շահերը յօգուտ միւսների. և նա կարգադրում է հողի վերաբաժանումը, որի սկզբունքը լինելով միևնոյնը, արտայայտւում է մի քանի ձևերով։ Համայնական հողատիրութեան հիմքը կայանում է ոչ թէ այս կամ այն հողատիրական կարգերում, այլ այն համոզմունքի մէջ, որ ունի համայնքը ամբողջ գիւղի հողի վերայ։ Եթէ համայնքը գիւղական հողը իւր իրաւասութեան է ենթակայ համարում, հողատիրութիւնը այդ տեղ համայնական է, թէկուզ մի կտոր ազատ հող չը լինի և բոլորը բռնում լինին մասնաւոր ընտանիքները, որոնք կազմում են այդ համայնքը և վերաբաժանումը դեռ տեղի ունեցած չը լինի։ Համայնքը կարող է մոցնել վերաբաժանումը և փոփոխել իւրաքանչիւրի ձեռքին ունեցած հողի չափը։

Վերաբաժանման գոյութիւնը անհրաժեշտ պայման չէ համայնական հողատիրութեան։ Մենք հետևում ենք պրոֆեսսոր Կուալևսկու կարծիքին, որը արևմտեան Եւրոպայի հողատիրութեան պատմութեան մէջ ապացուցանում է վերաբաժանման ուշ ծագումը, որից առաջ լինում է առհասարակ նախագրական ձևը, գրաման ձևը (захватная система), որը կայանում է նրանում, որ համայնքի իւրաքանչիւր անդամը հողի առատութեան պատճառով ազատ աւելացնում է իւր վարելահողերի տարածութիւնը, որքան կարողանում է։ Ինչպէս ասացինք, վարելահողերի սպառումը յետեւցնում է վերաբաժանումն (передѣлы)։ Միևնոյն պատճառը սկսկում է ազդել մասնաւոր սեպհականութեան շրջանի տարածման վերայ։ Մասնաւոր սեպհականութիւնը նոյն չափ հին է, որքան հին է մարդկային հասարակութիւնը, բայց նորա շրջանը սկզբում եղել է շատ նեղ, ամփոփելով իւր մէջ միայն տունը և այգին, որոնք անհատի աշխատանքի արտադրութիւն են և հետևապէս պիտի պատկանեն անհատին։ Բայց այդ շրջանը ժամանակի ընթացքում տարածւելով, բռնում է գիւղական հողի ամբողջ տարածութիւնը։ Մասնաւոր սեպհականութիւնը ընդարձակող գործիչները բարդ են և ամեն տեղ միանման չեն։ Այստեղ մենք կարիք չունենք դոցա քննել։

Եւ այսպէս եթէ մենք հայոց պատմութեան մէջ չենք գտնում տեղեկութիւններ հողատիրութեան վերաբերմամբ, մենք նորանում գտնում ենք բացատրութիւն համայնական հողատիրութեան երկա-

բակեցութեան մեզանում, ընդունելով որ այդ հողատիրական ձևը առաջնայ եղածի շարունակութիւն է։ Հակառակ ենթադրութիւնը դէմ կը լինի պատմութեան տգիտութեան։

Ինչպէս ասել էինք նախընթաց գլխում իրաւաբանական յիշատակարանների բացակայութիւնը հայ գրականութեան մէջ տևում է մինչև 12 դարը, այսինքն երբ սկսում է հայ ազգի քաղաքական և կուլտուրական անկումը։ Այդ ժամանակ կազմեց իւր յայտնի դատաստանագիրը Մխիթար Գոշ անուանուած գիտնական վարդապետը։ Այս դատաստանագիրքը ինչպէս յայտնի է ընթերցող հասարակութեանը, հրատարակեց ընդարձակ «յառաջաբանութիւնով» լի գիտնական տեղեկութիւններով և խորիմաստ դատողութիւններով հայկական իրաւաբանութեան վերաբերմամբ վաղակորոյս Բաստամեան վարդապետը։ Այդ յառաջաբանութիւնը իսկապէս մի խելացի և գիտնական հետազօտութիւն է հայկական իրաւաբանութեան մութ աշխարհում։

Թէպէտ Մխիթարը նախադրութեան 10-րդ գլխում թուելով իւր դատաստանագրքի աղբիւրները, որոնք են, բնական օրէնքներ, օտար քրիստոնեայ ազգերի օրէնքներ, մահմէդական օրէնքներ, սուրբ գիրքը, Հայոց Եկեղեցու կանոնները, նա չի ցոյց տալիս ազգային աղբիւր ոչ աւանդական և ոչ գրաւոր, բայց հայր Բաստամեանը իրաւացի դատում է. «Եթէ նա (Գոշը) հարկաւոր և օգտակար համարեց մի քանի բաներ քաղել ուրիշ քրիստոնեայ ազգերի իրաւաբանական աւանդութիւններից, մահմեդական և հրէական գրաւոր օրէնքներից, ինչպէս կարող էր առանց ուշադրութեան թողնել այն ազգի իրաւաբանական աւանդութիւնները, որի համար նա գրում էր իւր դատաստանագիրքը։ Եւ արդարև որ նա ոչ սակաւ նիւթ է քաղել նաև ժողովրդի մէջ եղած իրաւաբանական աւանդութիւններից՝ այդ պարզ երևում է ամբողջ դատաստանագրքի մէջ մանաւանդ նորա Երկրորդ մասնում, ուր ամփոփուած են առաւելապէս աշխարհական օրէնքները»։ Նա այդ հաստատում է և Մխիթարի խօսքերի հիման վերայ. «Առաջին մասնի 109 կանոնի մէջ, ուր նա խօսում է ազգականների ամուսնութեան չհաստութեան վերայ, նա ասում է. «Եւ թէ ունէի յաղագս այդոցիկ այլ ինչ ըստ տեսութեան դնել մտաց՝

ո՛չ կամեցայ զի մի՛ ընդդէմ ինչ կարծիցեմ կանոնաց, այլ որ ոչ թուին ի կանոնաց ի կենդանի աւաք ձայն է». իսկ երկրորդ մասնի առաջին յօդուածի մէջ բացատրելով թէ ի՞նչպէս պէտք է բաժանել պատերազմում ժողոված աւարը, նա ասում է՝ «զայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց»։ Եւ մենք բոլորովին համերաշխ ենք հայր Բաստամեանի համոզմունքին, որ դատաստանագրքի նշանաւոր նիւթը պիտի մատակարարէին ժողովրդի իրաւաբանական աւանդութիւնները։ Զը նայելով, այս հանգամանքին չը նայելով, որ դատաստանագիրքը նախասահմանուած էր մի հողագործ ժողովրդի գործածութեան համար, ընդարձակ դատաստանագրքում ժամանակակից հողատիրութիւնը շատ չնչին դատի նիւթէ ներկայացնում; որից անկարելի է նորա կազմակերպութեան մասին մի որոշ կարծիք կազմել։ Այս փաստից ուղղակի յեռևում է այն, որ դատաստանագրքին ժամանակակից ժողովրդի մէջ պատահող հողատիրական վէճերը, դատաստանատների իրաւասութեան ենթակայ չեն եղել, այլ ուրիշ հիմնարկութեան, որի մասին մեր խօսքը յետոյ է։

Այն մի քանի յօդուածներից, որոնք շօշափում են մեղ հետաքրքրող առարկան, երևում է, որ դատաստանագրքին ժամանակակից Հայաստանում գոյութիւն են ունեցել, եկեղեցական կալուածատիրութիւն, ազնուական կալուածատիրութիւն և գիւղացու անկախ հողատիրութիւն. բայց չի երևում այդ իրաւունքների էութիւնը և սահմանը, որոնք առհասարակ մեծ զանազանութիւն են ներկայացնում և այդ կողմից հասնում այնպիսի ծայրահեղութեան, որպիսին օրինակ կարելի է տեսնել մեր «Միւլքադարութեան» և անգլիական «Լենդլորդութեան» մէջ։ Մինչդեռ մեր միւլքադարը առանց իրաւունք ունենալու խառնուել հողաբաժանութեան մէջ, ստանում է հողագործութեան արդիւնքի մի որոշ մասը ($^{1}/_{30}$), լենդլորդը կատարեալ սեպհականատէր է իւր կալուածքի, և տալիս է վերջինս կապալով նորան, ով աւելի է տալիս։ Հաղուագիւտ չեն դէպքերը երբ նա (լենդլորդը) հեռացնում է գիւղացուն, քանդում է նորա խրճիթները և իւր կալուածքը արօտատեղի դարձնում, եթէ այդ գտնում է իւր համար աւելի օգտակար։

53 յօդուածը խօսում է եկեղեցական կալուածների մասին, որից

երևում է, որ այդ կալուածները հոգևորականութիւնը իրաւունք է ունեցել և վաճառելու. «Վասն ընչից, որ անուանեալ իցէ եկեղեցւոյ զինչ և իցէ եթէ գեղ, եթէ այլ ինչ, մինչև եպիսկոպոս լեալ է ի տեղւոջն և երեցունք վաճառեցին, իշխան լիցի անդրէն ի նոյն պահանջել. բայց եպիսկոպոսն կշռեսցէ զիրաւունն և զարժանն, եթէ մարդ է. առնուլ զգինն կամ դարձուցանել»... Բայց չը նայելով այդ հանգամանքին (վաճառելու իրաւունքը) գիւղացիք այդ եկեղեցական կալուածքում կարող էին զանազան հողատիրական կարգեր ունենալ համայնականից սկսած մինչև մասնաւոր սեպհականութիւնը, կրելով եկեղեցու վերաբերմամբ որոշ պարտականութիւններ տուրքով և աշխատանքով։ Այդպէս է մեր այժմեան վանքական կալուածներում, որոնցում եկեղեցին ստանալով որոշ մուտք հոգաբաժանական կարգերը թողնում է համայնքին։ Այդպէս էր Վրաստանում, ինչպէս ապացուցանում է պ. Բահաթրեանը իւր հետաքրքրական բրոշիւրում „Личныя и поземельныя права Древней Грузіи“։ Եկեղեցուն կալուածներ բաշխելիս, սկզբում մինչև անգամ սահմանները չէին որոշում այդ երկրում, որովհետև մուտքը, որը որոշ էր, կախուած էր ոչ թէ հողի տարածութիւնից, այլ տների թուից։ Միայն 17 դարում այդտեղ կալուածների մուտքը վերածուեց արդիւնքի մի որոշ մասի, իսկ հողը մնաց համայնքի անմիջական իրաւունքին։

Երկրորդ մասի III գլուխը շօշափում է ազնուական կալուածատիրութիւնը։ Այս յօդուածի մէջ շատ նշանաւոր կէտ կայ. «Ազատ յԱրարչէն եղև մարդկային բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ։ Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան զի թողեալ զտերունին ազատ է ուր և կամեսցի կալ։ Ապա այսմ ոչ ներէ ոք իտերանցն և բռնադատ է զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալ այլ ուր և չէ անդ»։ Այս յօդուածի վերաբերմամբ կարելի է ասել նոյնը ինչ որ նախորդի, մասին ասւեց—այն՝ որ նա ցոյց է տալիս ազնուական կալուածատիրութեան գոյութիւնը միայն, որը կարող էր զանազան հողատիրական կարգեր ունենալ։ Աւելի հետաքրքրական է այս յօդուածը ուրիշ կողմից։ Սորանից պարզ երևում է, որ մեզանում եղել են գիւղացիք սահմանափակուած իրաւունքներով. արդեօք ճորտութիւն է եղել այդ (крѣпостное состояніе) թէ աւելի սահմանափակ կախում, մնում

է մուրթ։ Որ այս յօդուածը աչքի առաջ ունի հողագործ գիւղացիներին և ոչ ստրուկներին, պարզ երևում է «ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ» խօսքերից։ Բայց նոյն իսկ ճորտութիւնն էլ չի որոշում հողատիրութիւնը։ Ռուսաստանում ճորտերը, կրելով որոշ պարտականութիւններ տուրքով (оброкъ) և աշխատանքով (барщини) իրանք էին որոշում հողատիրական կարգերը։ Աւելի հետաքրքրական է 106 յօդուածը, որը խօսում է նոր գիւղ շինելուց յետոյ հողերի բաժանման մասին։ Բայց այս յօդուածն էլ չի պարզում՝ թէ ինչ տեսակ հողատիրութիւն պիտի գոյութիւն ունենայ այդ գիւղում—մասնաւոր սեպհականութիւն թէ համայնական. «Ցորժամ զառաջին շինիցի գիւղ, չէ հաստատուն բաժանումն հողոյն և ջրին և այլոց այսպիսեաց մինչ բաւական բնակիչք ժողովիցեն և ապա բաժանումն հաստատիցէ։ Ապա թէ աւերակ շինիցի և չիցէ բազմաժամանակեայ, մինչ զի գիտել իւրաքանչիւր զսահման անգաստանաց և զայլոց, իւրաքանչիւր ըստ սահման նախնեացն կալցին։ Իսկ թէ բազմաժամանակեայ իցէ և անգիտելի և տէրութեան փոփոխումն եղեալ նորոգ արասցեն բաժանումն հաւասարադատութեամբ, նախ եկեղեցւոյն և ապա այլոց մասն աւելի տալով, որ գլխաւորն իցէ գեղջն վասն հոգալոյ զայլոյ։ Եթէ ընդունենք, որ այս յօդուածը ուղղակի մասնաւոր սեպհականութեան մասին է խօսում, դա չի նշանակում, որ այս հողատիրական ձևը եղել է տիրապետող։ Մասնաւոր սեպհականութիւնը և համայնական հողատիրութիւնը միևնոյն երկրում կարող են զուգընթացաբար գոյութիւն ունենալ։ Բայց «բաժանել» խօսքը գործ է ածւում և համայնական հողաբաժանութիւնների ժամանակ։ Համայնական հողատիրութիւնը չի ենթադրում անպայման անընդհատ վերաբաժանումներ։ Վերջին դէպքում էլ (համայնական հողատիրութեան ժամանակ) կարող էր բաժանում լինել անորոշ ժամանակի համար, մինչև որ համայնքը կարիք կը զգար փոփոխութիւններ անելու։ Ինչպէս կը տեսնենք յետոյ, մեր համայնական հողատիրութիւնը հիմնուած է այդ սկզբունքի վերայ։ Իսկ ինչ վերաբերում է համայնքի մի քանի անդամներին աւելի հող տալուն, որը առաջարկում է յօդուածը «վասն հոգալոյ զայլոյ», այդ տեղի ունի և ուրիշ երկիրներում, ուր համայնական հողատիրութիւն է, օրինակ Հնդկաստանում Պէնջափի շատ համայնք-

ներում, ինչպէս այդ հաստատում են Անգլիացի գիտնականը Մէնը և Բելգիացի Լաւելէն։

Ուրեմն այսպէս, դատաստանագրքում չը կան յօդուածներ, որոնք որոշէին համայնքի անդամների հողային յարաբերութիւնները, միմիանց վերաբերմամբ և համայնքի վերաբերմամբ,—ուրիշ խօսքերով դատաստանագրքից չի երևում թէ ինչ հողատիրական կարգեր էին տիրապետում նորա ժամանակակից գիւղական համայնքներում։

Այս իրողութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ կարելի է կարծել առաջի անգամից։ Միայն մեր դատաստանագրքում չենք տեսնում այդ բացակայութիւնը, այդպէս է և ուրիշ շատ ազգերի նախնի դատաստանագրքերում, ինչպէս օրինակ գերմանացիների, Ռուսների։ Առաջի անգամից շատ անհասկանալի է թւում՝ թէ ինչպէս մեր դատաստանագիրքը նոյնպէս և վերև յիշած ազգերի՝ առանց իրաւաբանական պաշտպանութեան են թողել առաջնակարգ տնտեսական նշանակութիւն ունեցող մի առարկայ, որը համարեայ միայնակ ապրուստի միջոցն է եղել այն ժողովուրդների, որոնց համար նախատեսուած են եղել այդ դատաստանագրքերը։ Որ հողագործ երկրում ամենից շատ հողային վէճեր պիտի պատահեն, դրանում չի կարող կասկած լինել։ Հարց է ծագում, ի՞նչու այդ հողային վէճերի համար օրէնքներ չը կան այդ դատաստանագրքերում։ Գարդ է, որ այդ վէճերը դատաստանատներում չէին դատւում, ուրեմն ուրիշ հիմնարկութեան էին ենթակայ։ Մեր կարծիքով այսպիսի երևոյթ դատաստանագրքերում ուղղակի հետևանք է երկրում տիրապետող համայնական հողատիրութեան և ուրիշ կերպ անկարող է լինել։ Այդ ապացուցեց Արևմտեան Եւրոպայի հողատիրութեան պատմութիւնը։ Երբ տէրը և կառավարիչը գիւղական հողերի համայնք է, երբ վերջինիս ամեն մի անդամը ձայն ունի և մասնակցում է հողատիրական կարգեր կազմելու մէջ և օգտւում է այնչափ հողով, որչափ թոյլ է տալիս նրան համայնքը. երբ տէրութիւնը յայտնապէս կամ լռելեայն ընդունում է համայնքի այդպիսի մեծ իրաւասութիւնը գիւղական հողերի վերաբերմամբ, նա արդէն կարիք չ՝ունի խառնուելու այդ համայնքի հողատիրական կարգերի մէջ իւր դատաստանատների միջոցով։ Այդ դէպքում համայնքը է առաջին և վերջին դատաստանատեղը (инстанція)։ Ուրեմն, եթէ մի երկրի իրա-

ւաբանական յիշատակարանի մէջ լռութիւն է պահպանուած գիւղական հողատիրութեան վերաբերմամբ, դա ուղղակի ցոյց է տալիս, որ այդ երկրում հողատիրական ձևը համայնական է եղել։

Վերջացնելով սորանով մեր յօդուածի ընդհանուր մասը, հետևեալ գլխում մենք կ'անցնենք յօդուածիս անմիջական նպատակին։

(Կը շարունակուի)